

«ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՂԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ»

(Քարոզ՝ խոսված Մայր տաճարում փետրվարի 27-ին)

Մեծի Պահոց շրջանի երրորդ կիրակին է, որ բոլորս միասին ապաշխարությամբ և զղջումով դիմավորում և փորձում ենք Ավետարանի պատգամների համաձայն ապրել:

Մեծ Պահքի վեց կիրակիներից երրորդը Հայաստանյայց Եկեղեցվո Տոնացույցը կոչում է ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ: Այդ անունը Աստվածաշնչից է: Քիչ առաջ սարկավագը ընթերցեց այն մասը, որը վերաբերում է մի պատմության, մի առակի, որ մեզ է ավանդել մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Ահա առակը, ըստ Ղուկաս Ավետարանչի.

«Մի մարդ երկու որդի ուներ. նրանցից կրտսերը հորն ասաց. հա՛յր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը: Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց: Քիչ օրեր հետո, կրտսեր որդին, փողի վերածելով ամեն ինչ, գնաց հեռու աշխարհ և այնտեղ վատնեց իր ունեցվածքը, որովհետև անառակ կյանքով էր ապրում: Եվ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա սկսեց չքավոր դառնալ: Գնաց-դիմեց այդ երկրի քաղաքացիներից մեկին, և սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու: Եվ նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս: Ապա խելքի եկավ և ասաց. քանի՞ վարձու աշխատողներ կան իմ հոր տանը, որ առատ հաց ունեն, և ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ-գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ, հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրո՛ւ իբրև քո աշխատավորներից մեկը: Եվ վեր կացավ եկավ իր հոր մոտ. և մինչ դեռ հեռու էր, հայրը տեսավ նրան և գթաց. վեր կացավ և վազեց նրան ընդառաջ, ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան: Եվ որդին ասաց նրան. հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Հայր իր ծառաներին ասաց. անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրեք և նրա ոտքերին՝ կոշիկներ. բերե՛ք պարարտ եզը, մորթեցե՛ք, ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կեն-

դանացավ, կորած էր և գտնվեց. և սկսեցին ուրախանալ: Իսկ նրա ավագ որդին ագարակում էր. և մինչ գալիս էր և տանը մոտեցավ, լսեց երգերի և պարերի ձայնը. և իր մոտ կանչելով ծառաներից մեկին՝ թե այդ ի՞նչ է: Եվ սա նրան ասաց. քո եղբայրը եկել է, և քո հայրը մորթեց պարարտ եզը, որովհետև ողջ-առողջ ընդունեց նրան: Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել. իսկ հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր նրան: Որդին պատասխանեց և ասաց հորը. այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել, ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, պարարտ եզը նրա համար մորթեցիր: Հայրը նրան ասաց. որդյակ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է. բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: (Ղուկ. ԺԵ 11—32):

Երբ որդին հոր մոտ էր, վայելում էր իր հոր խրատներն ու պատգամները, օգտվում էր նրա ճոխ սեղաններից և ապրում էր շատ բարգավաճ կյանքով: Հանկարծ կեղծ ազատության գաղափարը արմատավորվում է իր հոգում և մտքում, և նա հպարտացած մի օր դիմում է իր հորը, ասելով՝ տո՛ւր ինձ քո ունեցվածքից իմ բաժինը: Ստանում է և մեկնում ուրիշ աշխարհ: Որդին այս անգամ գտնվում է հորից հեռու, ապրում է մենակ, պանդխտության մեջ: Իր ինքնիշխան եսը իրեն առաջնորդում է մեղքի ճանապարհով մինչ թշվառություն, կտրված հոր գուրգուրանքից, նրա օրհնությունից, նրա բարերարությունից, մնում է մենակ, խեղճ ու թշվառ: Սակայն, ինչպես առակում է ասվում, **«Եւ եկեալ ի միտս իւր»,** հանկարծ մի պահ կերպարանափոխվում է, խելքի է գալիս, և զղջումի առաջին նշույլը փայլում է իր մտքում: Եթե հարյուրավոր վարձկաններ իմ հոր տանը ավելի լավ վիճակում են, քան ես, ինչո՞ւ չգնամ և չասեմ իմ հորը. այո՛, մեղք գործեցի, հեռացա քեզանից, խնդրում եմ ներես ինձ, նույնիսկ արժանի չեմ այլևս քո որդին կոչվելու: Զղջումին անմիջապես հետևում է գործողությունը և կրտսեր որդին իր խորհածը դարձնում է իրականություն և մեկնում հոր մոտ:

Վերադարձ առ հայր: Հայրը բարեգթությամբ ընդունում է նրան, ինչպես արդեն ասացինք, գեղեցիկ պատմուճան է հագցնում, նոր մատանի դընում մատին, որպես ուխտի ու դաշնության նշան, և նոր կոշիկներ հագցնում, որպեսզի մեղքի ճանապարհներով չընթանա: Դախորդ կիրակին, որ կոչվում էր Արտաքսման կիրակի, մեր նախաստեղծները դեմ գնացին Աստծուն, և Աստված նրանց վտարեց դրախտից: Այս կիրակին մարդկային կյանքի ամենացայտուն նկարագրություններից մեկն է, երբ որդին անհնազանդ է գտնվում, անհավատարիմ իր հորը և հեռանում նրանից: Սակայն երբ զղջում է ապաշխարությամբ, զգում է իր գործած մեղքը, վերադառնում է իր հոր մոտ և ներողություն խնդրում:

Մեղք, զղջում, ապաշխարություն և վերադարձ առ հայր: Կարելի է ասել, որ մարդկային կյանքը ընթանում է այս հանգրվաններով, և զարմանալիորեն միշտ էլ հայրը բարեգութ է և ողորմած: Ինչպես Աստվածաշունչ մատյանն է ասում, երբեք Երկնավոր Հայրը մեղավորի մահը չի ցանկանում, այլ նրա դարձը: Կմնա, որ ենթական, այս պարագային՝ կրտսեր որդին, զղջա, ապաշխարի և վերադառնա: Մոտավորապես հասկանալով այս առակի իմաստը, կարծես թե հասկանում ենք նաև քրիստոնեական ուսմունքի էությունը: Ահա թե ինչու Եկեղեցու հայրերից շատերը Անառակ Որդու առակը կոչել են փոքրիկ ավետարան Ավետարանի մեջ: Նա մեր սրտի

պատմությունն է, մեր կյանքի պատմությունը: Հարց տանք մենք մեզ. այսօր մեր կյանքում կա՞ն արդյոք անառակ որդիներ, իսկ եթե կան, ինչպե՞ս են նրանք գործում այս կյանքում, հետևո՞ւմ են արդյոք անառակ որդու գործողություններին, թե մնում են մեղքի մեջ և տառապում՝ առանց ունենալու իրենց հոր հոգատար գուրգուրանքը:

Եկեղեցին կոչ է անում անառակ կյանքով ապրող իր բոլոր որդիներին, որ զղջան և դարձի գան, լքեն իրենց անառակ վարքը և հանդերձավորվեն Երկնային Հոր շնորհներով և ապրեն քրիստոնյային վայել կենցաղավարությամբ:

Առակը ունի նաև հորդորական մաս, որ շատ խիստ ձևով բազմիցս Իր Երկրային առաքելության ընթացքին Հիսուս Իր խոսքը ուղղել է Փարիսեցիներին և խարազանել նրանց: Այդ ավագ որդու կերպարն է: Ավագ որդին, որ ապրում էր հոր տան մեջ, ճշմարտապես ավելի օտար էր հորը, քան կրտսեր որդին: Նա այնքան մեծամիտ էր և անգութ, որ նույնիսկ իր վերադարձած եղբորը չասաց եղբայր, այլ, իր հորը դիմելով, ասաց՝ քո՛ որդին, ոչ թե իմ եղբայրը: Տան մեջ լինելով նա օտար էր իր հորը: Երբ հայրը բացատրում էր նրան որդու վերադարձի իմաստը, նա անգիտացավ և նույնիսկ հորը պատասխան չտվեց: Ճշմարտացիորեն, այստեղ ավագ որդին իր անառակ կերպարով մնաց անդրդվելի և դարձի չեկավ: Իսկ անառակ կյանք ապրած և իր ետևում թողած, մեղսալից ճանապարհով անցած և վերջապես մաքրված կրտսեր որդին ներկայանում է որպես մեղքերից ազատագրված նոր մարդ:

Սիրելի հավատացյալներ, այն ճանապարհը, որ դուք ընտրել եք Մեծի Պահոց շրջանին, թող ձեզ տանի խավարից դեպի լույս, մահից դեպի կյանք, ապականությունից դեպի անապականություն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԱՍՈՂԻԿ ԵՊՍ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ